բեմք քումդ բարեպաշտութեան։ Բանդի ատ 'ի Ս. Քաղաքս երուսաղէմ 'ի մէջ Ս. Յարութեան Աշխարհամատրան տաճարին՝ իւրաքանչիւր ազգ ունի գյատկօրէնութիւն ինչ առ ոմանս տեղիս՝ յորում զաղօթս և զարբաղնատուրբ պատարագն մատուցանէ. և զոմանս տեղիս՝ զորս վասն ջերմեռանդութեան 'ի շաբաթուոջ միանգամ աւելէ՝ եւ ոչ ոք ումեք ներհակի. իսկ այս մի քանի ժամանակ եղեւ որ վասն անտեղեկութեան (գալոց փոխանորդաց և մեծաւորաց) երկրիս սովորութեան՝ դրդմամբ ոմանց փաթերայից զսիրոյն օրէն արմատաքի խլել ջանացողաց լինի՝ և եղեւ սակաւ ինչ դժտութիւն՝ կամելով զրկել զմեզ յիրաւանց մերոց. զպատարագելն եւ զաւելելն կամելով խափանել, որ եթէ մեք 'ի մեր սեփհական տեղիսն զպատարագելն նոցա ոչ արգելումք, այլ հիւրասիրութեամբ պատուեմք յաւուրս պատարագելոյ նոցին, և զի՞նչ վնաս պատուոյ նոցին ծնանէր 'ի տեղիս մեր պատարագելն մեր 'ի Ս. Յարութեան տաճարին, և զաւելելն 'ի սահմանեալ տեղիսն։ Ո՛վ դերապատիւ եւ աղնուափառ իշխան, երբեմն ըստ սովորութեան մերում վասն կապերտից ձգման խոժոռէին, և զայն բարձին. և այժմ յաւուրս քոյոյ աստուածասիրութեան 'ի խորանի մերում զպատարագելն մեր խափանել ջանան և զաւելելն, և այն ոչ առանց դանից՝ և արիւնախաթաւ առնելոյ զոմն 'ի մերոց միաբանից, որոյ ներեսցէ Աստուած՝ թէպէտ մեծ իցէ յանցանքն. զի եթէ առաջի աստուածասէր ատենի ձերոյ առանց հրամանի սպասաւորք ձեր զոմանս խոշտանգիցեն՝ յանդուգն թուին, քանի՞ օն եւս յորժամ առաջի Քրիստոսի Գերեզմանին մինչ ցարեան հեղումն դանիցեն։ Բայց սէրն ծածկէ զբազմութիւն մեղաց. ըստ օրինի սիրոյն Քրիստոսի՝ թողեալ լիցին յանցանքն նոցին։ Սակայն զի փոքր պատճառաւ անրաւ չարիք տարածանին յաշխարհի, վասն որոյ ջանալի է արմատաքի խլել զորս հանդերձեալքն են բոզրոջիլ, եւ զկայծն շիջուցանել մինչդեռ ոչ իցէ լեալ հրդէհ։

Աստուածասէր և խաղաղասէր Կայսերութիւնն ուղղափառ քրիստոսապատակեալ թագաւորին Ֆրանցայու այնքան հիմնեալ է 'ի խոր խաղաղութեան, մինչ զի շարժուն զե-